ՆԱՁԱՐ.– Թագաւոր քա՛ջ: Հազար եօթ հարիւր մարդ էլի ջարդուեց:

ՆԱՁԱՐ.– Դրանք էլ ի՞նչ հաւես արին ջարդուելու: Փլաւի՞ են քշում: (Լռութիւն:) Է, լաւ, ինչի՞ էին ջարդուում:

ՆԱՁԻՐ.– Չեն կարողանում, տէր իմ:

ՆԱՁԱՐ.– Գնացէք ասէք կարողանան: Ձա՛նը՛մ, կռիւն ի՞նչ բան է, որ չեն կարողանում: Իշխան Սաքո՞…

ՍԱՔՈ.– (Վախեցած) Ի՞նչ է թագաւորն ապրած կենա…

ՆԱՁԱՐ.– Մի գնա փրթի էդ թշնամուն…

ՍԱՔՈ.– Բը՛, բը՛, բը՛, բը՛, …Գնա՞մ:

ՆԱՁԱՐ.– Գնա՛, փրթի՛…(Սաքոն դուրս է գալիս եւ թաքնւում դռան հետեւը:)

ՆԱՁԻՐ.– Ուրիշ ի՞նչ կհրամայես, տէր իմ:

ՆԱՁԱՐ.– Հրամանք եմ անում: Ժողովրդին առաջ գցեցէք, թող գնա համ կռուի, համ էլ հառամզադա զօրքի շլնքին տա մօտս բերի, տեսնեմ ինչ խորհուրդ են անում:

ՆԱՁԻՐ.– Իսկոյն կուղարկեմ ժողովրդին: (Մոտենալով պատուհանին) Մունետի՛կ, նոր հրաման: Կանչիր ժողովրդին:

ՄՈՒՆԵՏԻԿ.– Հաւաքուեցէ՛ք… նո՛ր հրաման… (Աղմուկ եւ ժողովրդի բացականչութիւններ՝ «Եկէ՛ք, եկէ՛ք»:)

ՆԱՁԻՐ.– Ո՛վ Ժողովուրդ: Նոր երջանկութիւն: Մեր քաջ թագաւորն աշխարհ է տիրում ձեզ փրկելու համար, խստագոյնս հրամայում է ձեզ, որ գնաք ձեր քաջարի զօրքին օգնութեան: Դէ օ՛ն, դուք, որ միշտ մեռել էք թագաւորի համար, հիմա էլ գնացէք մեռէք:

ՆԱՁԱՐ.– Դէ հիմի ռադ եղէք ու էլ զահլա մի տանէք: Տէրութեան գործը մնաց: Կերակուրները սառեցին: Ես գործ ունեմ: Ես հաց պիտի ուտեմ: Հասկացա՞ք, հայվաններ: Էլ սրանից դենը քանի կջարդուի՝ զարկեցէք, քանի կջարդուի՝ զարկեցէք: Ու մին էլ, թէ ներս էք եկել ու կռուի վրայ խօսք էք բաց արել՝ կարկաժներդ միջից կկիսեմ: Իմացա՞ք:

ԲՈԼՈՐԸ.– Իմացանք, Ստուեր աստծոյ:

ՆԱՁԱՐ.– Հա՛յդէ, եա՛լլա: (Գնում են:) Է՛, մեր գործին նայենք: (Մենեկապետին) Գեադա՛, արի հացը հաւաքի: Ուստիան, մի քիչ էլ գնանք կտեր ծերին նստենք, ղայլա՛ն քաշենք: (Մենեկապետին) Կասես, որ ղայլան բերեն: Իշխան Սաքո՞: Դրօշակը ա՛ռ: (Սաքոն վերցնում է դրօշակը: Դուրս են գնում Ուստիանի հետ: Նրանց գնալուց յետոյ Մենեկապետը ներս է կանչում սպասաւորներին, նշան անում, որ սեղա-